

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՐԴԱՐՈՒԵՍՏ

Այս ընդհանուր ֆոնի վրայ միանգամայն ուշագրաւ են այն դիտողութիւնները, որոնց համաձայն զարգարուեստի բոլոր մոտիվները կամ նրանց առանձին խմբերի ծագման և էութեան հարցերը դեռեւս լուծուած չեն: Նոյն Ս. Ի. Ռուզենկոն, նկատի առնելով սկիւթական զարդերի մի ամբողջ խումբ, գրում է. «Ինչպիսի՞ն է այդ զարդային մոտիվների ծագումը, դեռեւս չի պարզուած»: Այս առումով առաւել ուշագրաւ են հանգուցեալ Ե. Յու. Կրիչևսկու հետեւեալ տողերը.

«Ամենից դժուարն այն է, որ դեռեւս չի մշակուած զարգարուեստի շարագրութեան սեմանտիկան ուսումնասիրելու մեթոդ»:

Ժապաւենած և զարդանկարներու առանձին էլեմենտները, ինչպէս, օրինակ, շրջագծի, խաչի նշանները, արդէն գրաւել են հետազոտողների ուշադրութիւնը, բայց դեռեւս ո՛չ ոք չի փորձել յայտարարել օրնամենտալ կոմպոզիցիաների սեմանտիկան ամբողջապէս, բացատրել բուն զարդանկարներու ոճը»:

Ապա, շարունակելով, նա գրում է.

«Ինչպէս սահմանել, ունի՞ արդեօք տուեալ զարդանկարային սիստեմը գաղափարական առանձին բովանդակութիւն, և ինչպէս են համատեղուած մէկը միւսի հետ զարդային ձեւը ու սեմանտիկան — Այս հարցին դեռեւս պատասխան չկայ»:

Այսպիսով, միանգամայն վստահօրէն կարելի է նկատել, որ իրենց ամբողջութեան մէջ դեռեւս բացատրութիւն չեն գտել ինչպէս որեւէ ժողովրդի, այնպէս էլ բոլոր ժողովուրդների զարգարուեստների հիմնական մոտիվների ծագման և գաղափարական բովանդակութեան հարցերը: Բացի դրանից, գոյութիւն չունի նաեւ այդ աշխատանքները կատարելու համար մշակուած որեւէ մեթոդ:

Ահա այս խոշոր և վերին աստիճանի բաղմակողմանի հարցերն իրենց ամբողջ հասկով մէկ կանգնած են սովետական զարգարուեստագիտութեան առաջ:

Ներկայ աշխատութեան նպատակն է բացատրութիւն տալ հայկական զարգարուեստի հիմնական մոտիվների ծագման և գաղափարական բովանդակութեան հարցերին, ինչպէս նաեւ նրանց հետ առնչուող մի շարք ուրիշ կարեւոր խնդիրներին:

Վերոյիշեալ տողերից ինքնին հստակեւորւի է, որ լուծել նշուած հարցերը հայ ժողովրդի զարգարուեստի հարուստ ու հին տուեալների հիման վրայ, նշանակում է բանալի տալ նաեւ միւս ժողովուրդների զարգարուեստների հետ կապուած համապատասխան հարցերի լուծման համար:

Հասկանալի է նաեւ, թէ որքան ակտուալ և միաժամանակ որքան դժուարին գործ է նշուած աշխատանքին ձեռնամուխ լինելը:

Ներկայ աշխատութիւնը շարադրելի մենք ձգտել ենք, ամենից առաջ, հանգամանօրէն ծանօթանալ հայկական զարգարուեստի բոլոր բնագաւառների հետ, որովհետեւ զարգարուեստ ասելով հասկանում ենք այն արուեստը, որը գործ ունի առ հասարակ զարդերի հետ, անկախ նրանից, թէ ո՛րտեղ են երևան գալիս նրանք: Իսկ այդ բնագաւառները, ինչպէս նշուեց, շատ և շատ են: Ըստ որում, մեր նպատակը չի եղել քննել այդ բնագաւառներից իւրաքանչիւրի բոլոր կարեւոր առանձնայատկութիւնները, դերը, նշանակութիւնը և այլն, այլ յայտարարել նրանց զարգամոտիվների հիմնական տեսակները, պարզել նրանց առնչութիւնները և բացատրել նրանց էութիւնը:

Ինքնին հասկանալի է, որ այս աշխատանքների յաջողութիւնը կախուած պիտի լինէր, ամենից առաջ, զարգամոտիվների

առանձին էլիմենտների, ապա նրանց հա-
րադարձութիւնների մանրակրկիտ ուսում-
նասիրութիւնից, որոնք և կազմում են
տուեալ զէպքում հայկական զարդարուես-
տի հիմնական մոտիվները:

Ինչպէս յայտնի է, զարդերի տեսակնե-
րը տատանւում են ամենապարզ էլիմենտ-
ներից, զարդամիաւորներից կամ զարդա-
քշիջներից սկսած մինչև ամենաբարդ ու
ամենախրթին շարադրութիւնները: Հաս-
կանալի է, որ նրանց էութիւնն ըմբռնելու
համար, նախ՝ պիտի բացայայտել առանձին

գաւառում ձեռք բերած զիտելիքները:
Սակայն կենաց ծառի մոտիվի միջոցով ընդ-
հանրացուել են նաև կենդանական աշխարհի
խոկ այնուհետև հասարակական հասկացու-
ղութիւնների հետ կապւած շատ կարևոր
հարցեր, որոնք արդէն աւելի քան բարդ
պատկերացումների արդիւնք են: Ելնելով
այս հանգամանքից, մենք ձգտել ենք,
որպէսզի զարդարուեստի առանձին, պարզ
էլիմենտների և զարդամոտիվների բացա-
տրութեան հետ միասին, առաջին հերթին,

բացատրուեն գաղափարական աւելի պարզ
քնոյթ ունեցող հարցերը, իսկ
յետոյ, աստիճանաբար առաջ
քաշուեն աւելի բարդ ու խրթին
հարցերը: Հետեւապէս չպիտի
կարծել, թէ առաջին հերթին
քննուող հարցերի կապակցու-
թեամբ մէջ բերուած մոտիվնե-
րը միայն հենց այդ հարցերին
են նուիրուած եղել, իսկ յետոյ
մէջ բերուածները՝ աւելի քան
հարուստ քոփանդակութիւն են
ունեցել:

Ներկարատե ու հանգամանա-
լից պրպտումների շնորհիւ մեզ
յաջողուել է բացատրել այն
պարզ զարդաձևերի պատկերն
ու էութիւնը, որոնք կազմում
են ինչպէս հայկական, այնպէս էլ
տարբեր ժողովուրդների զար-
դարուեստների գլխաւոր տարիւ-
քը և առկա են բոլոր բարդ կոմ-
բինացիաներում՝ որպէս բազկա-
ցուցիչ մասեր:

Այս խնդիրը լուծելիս մենք
առաջնորդուել ենք գաղափա-
րական կլասիկների այն ցու-

ցումներով, որոնց համաձայն յիւրաքան-
չիւր պատկերի ու ձևի և համապատաս-
խան այլ հասկացողութեան հիւքում նա-
խապէս պիտի ընկած լինէին նիւթական
ոէալ նախադրեալներ, քնութեան մէջ գո-
յուլիւն ունեցող իրեր, առարկաներ, թան-
ձրացեալ հասկացողութիւններ և այլն:

Փաստերի հանգամանալից քննութիւ-
նը, որը շարադրուած է ներկայ աշխատու-
թեան ինը գլուխներում, ցոյց տուեց, որ
զարդարուեստի մոտիվների հիւքում ըն-



էլիմենտների ծագումն ու խմատը, ապա՝
աստիճանաբար խորանալ աւելի բարդ ձե-
ւերի էութեան մէջ:

Ըստ որում զարդամոտիվների միջոցով
գրեւորուած գաղափարներն էլ իրենց
հերթին բաժանուում են համեմատաբար
պարզ և բարդ խմբերի: Այնպէս, օրինակ,
կենաց ծառի մոտիվն, ամենից առաջ, կապ-
ւում է բուսական աշխարհի հետ և նկատի
ունի մարդկանց բուսամշակութեան բնա-

կած են՝ մի կողմից՝ բնութեան ուժերը՝ իրենց օրգանական և անօրգանական աշխարհներով, իսկ մյուս կողմից՝ հասարակական հասկացողութիւնները՝ իրենց պատմական առումով: Եւ այս բոլորը՝ ո՛չ թէ որպէս սոսկական վերաբաղման, այլ որպէս մարդկային տքնաջան աշխատանքի, ամենօրեայ անդուշ պայքարի, ձեռք բերած նուաճումների, դասակարգային և հայրենասիրական յամառ մարտերի և այդ բոլորին համապատասխանող մտածողութեան ձևերի ու աշխարհայացքի արդիւնք:

«Բենք բացարձակապէս ոչինչ էինք հասկանալ նախնադարեան գեղարուեստի պատմութիւնից, — ասում է Գ. Վ. Պիւխանովը, — եթէ չհամակուենք այն մտաքով, որ աշխատանքը գեղարուեստից առաջ է եղել, և որ ընդհանրապէս մարդը առարկաներն ու երևոյթները զիտում է նախ օգտապաշտ տեսակէտից և միայն հետագայում նրանց նկատմամբ իր վերաբերմունքի մէջ կանգնում գեղարուեստական տեսակէտի վրայ»:

Պարզում է, որ յատկապէս մեր երկրագործ ու անասնապահ նախնիների աշխատանքային առօրեայի արդիւնքն են հանդիսանում առհասարակ զարդարուեստի մոտիվների տարերքը կազմող այնպիսի զարդաձևեր, ինչպիսիք են վարսանդապտղային, հատիկա-սերմային, չորս էլեմենտների, ծնող-գոյգերի, կենաց ծառերի մոտիվները, ինչպէս նաև ընտանեկան-արտադրական, տոհմաֆրատրիալ հասկացողութիւնների, նրանց նախնական մատերիալիստական և տարերայնօրէն զիալեկտրիկական մտածողութեան և այլ նմանների հետ կապուած հարուստ զարդամոտիվները:

Ա. Շ. ՄՆԱՅԱԿԱՆԵԱՆ

(Շարունակելի՝ 2)



ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՇՆԴԱՍՍԱՆԷՆ

Եւ կը շարունակուի Կարկաթան դէպի հարաւ, անգլիական տիրապետութիւնը յիշեցնող Մէյտանէն վար, խորանալով հընդկական թաղերու մէջ: Ցուցափեղկերը ըզզլիսիչ հարստութիւն մը ունին հոն և հընդիկը աւելի գրաւիչ: Իրիկնադէմերուն, փողոցները կը խալտան մանչ ու աղջիկ դպրոցականներով, երբ մթնոլորտը կը լեցուի անոնց ուրախութեամբ և այրող թափայտի և քաղօրներու ծուխով: Ու պիտի մտածես ականաւայ այդ աղոց ու աղջիկներուն մասին իբրև վերաշինուող Հնդկաստանի ապագան, որոնք բացուած Եւրոպայի զխառնութեան լոյսին՝ կ'իւրացնեն զայն լիովին: Հնդկաստան ընդարձակ գործի դաշտ մըն է այժմ, որ բազուկի աշխատանքին համահաւասար պէտքը ունի մտքի հերկին: Եւրոպական տարողութեամբ գիտուններ, մասնագէտներ, քաղաքական մարդիկ ունին. բայց երբ արթննան միլիոնները...

Աւելի վար, երբ կը սկսին նոսրանալ տունները, ընդարձակ բացաստանի մը վրայ, մարգերու աղուսը չըջանակի մը մէջ, հրեք արուեստական լիճեր նաւարկութեան, լողալու, զբօսանքի համար: Զմրան եղանակին, այդ չըջանակը մասնաւոր հրապոյր մը կը հագնի, քաղաքի ժխորէն և ծուխէն հեռու երբ մարգերը աւելի կը կանաչնան մշտադաւար ծառերու հովանիին տակ, ու ամուսնեմը մէջ ծաղիկները իրենց բիւրազան գոյներով կը ժպտին կապոյտ երկնքին և բիւրաւոր մարդիկ կը քալեն ճամաւայրերու երկայնքին, երազուն և դանդաղ: Այնքան ներդաշնակօրէն կը լուծուին այդ բոլորը իրարու մէջ որ կարծես երազներու աշխարհի մը տարտամ զգայնութիւնը կը համակէ քեզ: Սպիտակներու մէջ պարսիկներ՝ որոնք ջուրերու և մարգերու մէջ իբրև շուշաններ կը բացուին: Հոն է որ, արեւի-եան լճակին մէջ, հանդիպեցայ Զուկերու Սրբաբանի մը, առկախ, օրօրուն կամուրջի մը քով. հազարաւորներ անոնցմէ մարգերու յարգալից և բարի նայուածքներուն տակ կը խալտան, կը խաղան ջուրերուն հետ: Կեանքը այնքան նուիրական այս երկրին